№ 107 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24 **1891** ԵՐԵՔՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24 № 107

ՏԱՍՆ ԵՒ ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Ցայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

Աբզար, Դաւիթ, Համազասպ, կատարինէ և Բոզալիա Յովսէփեան Օրբէլիները և Վառվարէ Մովսէսեան Օրբէլի, սրտի ցաւով յայտնելով առաջինները իրանց հօր, իսկ վերջինն իր սկեսրայրի, ՅՈՎՍԷՓ աւագ-քահանայ ՕՐԲԷԼԻԻ մահը, խնդրում են ազգականներին և ծանօթներին շնորհ բերել հանգուցեալի թաղման հանդիսին, որը տեղի կունենայ Վանքի մայր-եկեղեցու գաւթում, այսօր, երեքշաբթի օր, սեպտեմբերի 24-ին, առաւօտեան 11 ժամին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Յովսէփ աւագ քահանայ Օրբէլի.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Ալէքսանդրօպոլից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Յակոբ փաշա Գաղաղեան. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՐՕՒՍԱ.—ՏԵՂԵԿԱՑՈՅՑ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մի քանի խօսք Բօստօվի և Նոր-Նախիջևանի հայ գաղթականութեան մասին.

ՅՈՎՍԷՓ ԱՒԱԳ ՔԱՀԱՆԱՅ ՕՐԲԷԼԻ

Այս օրերս վախճանվեց Թիֆլիսում 83 տարեկան հասակում մի հայ քահանայ, որը մանկավարժական ասպարիզին նուիրած իր ամբողջ կեանքի գործունէութեամբ աչքի ընկնող և ամենքից յարգված մի անձնաւորութիւն էր: Յովսէփ աւագ քահանայ Օրբէլի և իր մտաւոր զարգացմամբ, իր մտաւոր ցէնզով՝ մեր քահանաների շրջանում մի աչքի ընկնող անձնաւորութիւն էր:

Հանգուցեալը ծնվեց 1808 թուին Մօղղօկում և իր սկզբնական ուսումը ստացաւ այդ քաղաքի նահանգական ուսումնարանում: Արդէն 1826 թուին հանգուցեալը ստացաւ հոգևորական չորս աստիճան և ուրար, իսկ 1827 թուին Թիֆլիս եկաւ, որտեղ սկսեց հայոց լեզուով պարապել այս-տեղի Ներսիսեան դպրոցում: 1828 թուին գնդապետ Ղազարոս Լազարեան վերադառնալով պարսից դէմ եղած պատերազմից, հանդիպեց Օրբէլիին Գէորգ Քէթխուդեանի տանը և լսելով երիտասարդի ցանկութեան մասին ուսում առնելու՝ ընդունել տուեց երիտասարդին Մոսկվայի Լազարեան ճեմարան: Արդէն 1830 թուին հանգուցեալը նշանակվեց ճեմարանի ստորին դասարաններում կրօնի և հայոց լեզուի ուսուցիչ, մի և նոյն ժամանակ սպասաւորութիւն էր անում և Մոսկվայի հայոց եկեղեցում և հետևում էր Մոսկվայի համալսարանում մի քանի պրոֆէսօրների դասախօսութիւններին: 1835 թուին Օրբէլի ուղևորվեց Դօրպատ, այդտեղ գերմաներէն լեզուն ուսում նասիրելու համար, բայց նիւթական միջոցների պակասութեան պատճառով ստիպվեց թողնել Դօրբատ և եկաւ Պետերբուրգ, որտեղ Լազարեանները կարդեցին նրան Պետերբուրգի հայոց եկեղեցու սպասաւոր:

Սակայն այդ պաշտօնով չը բաւականանալով, Օրբէլի դիմեց մի դրաւոր յայտարարութեամբ հանգուցեալ մեծ իշխան Միխայիլ Պավլովիչին, բացատրելով որ մայրաքաղաքի ռուսաց զինուորական այլ և այլ դպրոցներում ուսում առնող հայ աշակերտները, մանաւանդ աղնուականներից, զուրկ լինելով իրանց կրօնի և մայրենի լեզուի ուսումից, անհրաժեշտ հարկ կայ հիմնել այդ դպրոցներում հայոց կրօնի և լեզուի ամբիոն: Եւ ահա, այդ յայտարարութեան հիման վրա, որի մտքերի պաշտպան հանդիսացաւ հանգուցեալ Նիկողայոս կայսրի առջև ինքն մեծ իշխան, հանգուցեալ Միխայիլ Պավլովիչ, Քարձրագոյն հրամայվեց մտցնել բոլոր ռուսաց զինուորական դպրոցներում ուսում առնող հայ աշակերտների համար, որպէս պարտաւորիչ առարկաներ՝ լուսաւորչական կրօնի և հայոց լեզուի դասաւանդութիւնը:

Յովսէփ աւագ քահանան, իր ամբողջ կեանքի ընթացքում, երբէք չը համաձայնվեց ծխական քահանայ լինել:

Հանգուցեալը դեռ 1839 թուին ձեռնադրվեց քահանայ Կարապետ եպիսկոպոսի ձեռքով, բայց իր ամբողջ կեանքի ընթացքում անծուխ մնաց, երբէք չը համաձայնվեց ծխական քահանայ դառնալ, այլ միշտ նախապատիւ էր համարում հաւատարիմ մնալ մանկավարժական ասպարէզին և սահմանափակել իր գործունէութիւնը, իր ամբողջ եռանդը այդ ասպարիզի սահմաններում:

Արդէն 1850 թուից սկսած հանգուցեալը կրօնուսոյց էր Թիֆլիսի գիմնազիայում, որն այն ժամանակ աղնուականների դպրոց անուն էր կրում, ապա առևտրական դպրոցում և նմանապէս քաղաքիս իգական ինստիտուտում, որտեղ աշխատեց հիմնել մի փոքրիկ հայոց եկեղեցի, ուր ինստիտուտի հայ աշակերտուհիները սկսեցին այնուհետև իրանց մայրենի լեզուով կատարել իրանց աստուածապաշտութիւնը: Հանգուցեալն իր ուսուցչական պաշտօնները կատարեց մինչև 1880 թիւը: Վերջին թուից սկսած նա հրաժարական տուեց իր ուսուցչական պաշտօններից՝ թէ ծերութեան և թէ տկարութեան պատճառով:

Ինչ և իցէ հանգուցեալ Յովսէփ աւագ քահանայ Օրբէլի մեր քահանաների մէջ մի հազուադիւտ անձնաւորութիւն էր իր այն ուսումնածարաւ ձգտումների պատճառով, որոնց անդադար և անդադար յագեցնել ջանալով, նա մինչև անգամ առիթ չէր բաց թողնում նոյն իսկ Եւրօպա գնալ՝ այնտեղի կեանքի ու լուսաւորութեան հետ ծանօթանալու համար:

Մեր այժմեան հայոց ինտելիգենցիայից ոչ ոք չէ եղել հանգուցեալի աշակերտ, կամ կրօնից, կամ լեզուից. և մենք բոլորս մինչև այժմ, մեծ երախտագիտութեամբ պահպանել ենք մեր ուսուցչի մասին ամենալաւ յիշատակներ:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼԻՑ

Սեպտեմբերի 16-ին

Երկարատև շոգերից յետոյ վերջապէս այս օրերս եղանակը զովացաւ: Այժմ օդը անձրևային է և ցուրտ: Հունձը Շիրակում վերջացած է, բայց կալսելը դեռ շարունակվում է: Անձրևային եղանակը շատ արգելք է լինում աջող կալսելուն: Այս տարի հունձը Շիրակում բաւարար էր, բայց աւելի լաւ էր արևմտեան Շիրակում: Այժմ հացը մեզ մօտ ծախվում է պուդը 80 կոպ. գարին պուդը 40 կոպ. ցորենը պուդը 75 կոպէկ: Մեր քաղաքը եկել են վեց գործակալներ, որոնք անդադար առնում են ցորեն և գարի: Շիրակի գարին շատ յարմար է գարեջրի գործարանի համար, այդ պատճառով Թիֆլիսի յայտնի գործարանատէր Վէյցել և Մաղէր իրանց գործակատարներին ուղարկել են այստեղ:

Քաղաքիս մէջ անդորրութիւն է: Գործը հանդարտ: Չը նայելով գաւառապետի կարգադրութեանը, որ քաղաքում կարգ, կանոն լինի, բայց և այնպէս կարգ ու կանոն չը կայ. սովորական բան է դիւղացիներին հարստահարելը, խաբելը, թակելը: Պէտք է խիստ հսկողութիւն, պէտք է աղատել ողորմելի չինականին լիրբ կինտօների հարստահարութիւնից: Սեպտեմբերի մէկից բացվեցան տեղիս դպրոցները, բայց այս տարի ս. Փրկչի արական դպրոցի երկու բաժանմունքները փակվեցան, Գլխաւորապէս միջին դասի մէջ բարոյականութիւնը իր ամբողջ ոյժով իչխում է. դուք կը գտնէք հայ ընտանիքներ, որոնք պահպանել են հայ ընտանիքին յատուկ տարրեր: Մի քանի ժամեր մնալով այդպիսիների մէջ, մոռանում ենք, որ Բօստօվումն ենք և մեր երևակայութիւնը փոխադրում է մեզ մեր հայրենիքը: Եւ պէտք է սև գոյնով նկարագրեմ հայ երիտասարդներին, որոնք այստեղ երկար ժամանակ ապրում են՝ և ընտանիքներ, որոնք կարճ ժամանակի ընթացքում մոռացել են իրանց պարզ և հասարակ սովորութիւնները և ընկել են ընդհանուր հոսանքի մէջ, մի խօսքով այնպէս փոխվել են, որ իրանց վրա հայութեան նշոյլ անգամ չէ մնացել: Մեր թերթերի մէջ քիչ նկատողութիւններ չեն երևացել Բօստօվի և Նոր-Նախիջևանի հայերի մասին. հեռու չէ այն ժամանակը, երբ մի թերթի մէջ տպված էր հետևեալ լուրը. «Մեր կողմերում ոչ մի տեղ այնքան տարածված չէ շռայլութիւնը, այնքան ընկած չէ բարոյականութիւնը, այնքան կատաղի չէ թղթախաղութիւնը և անառակութիւնը հայ երիտասարդ դասի մէջ, որքան Բօստօվում և Նոր-Նախիջևանում»: Այս խօսքերի ճշմարտութեան մէջ ամեն մարդ կը համոզվի, եթէ մի քանի շաբաթ մնայ այդ վերոյիշեալ քաղաքում: Մտէք դուք Բօստօվի պանդոկները. սենեակներից մէկի մէջ կը գտնէք հայ պարոններին, կանաչ սեղանի շուրջը նստած: Մտէք միւս սենեակը. նոյնպէս հայ երիտասարդներ, որոնց խօսակցութեան նիւթն իրանց կեղտոտ կեանքն է: Չը բաւականանալով դրանով, մտէք թատրոն, ցիրկ. կը գտնէք հայ երիտասարդներին նստած մի կարմրահեր, երեսը արուեստական կերպով սպիտակացրած օրիորդի, կամ կնոջ մօտ. այդ վերջիններն են հայ երիտասարդների աղախինները, որոնք ծծում ու թունաւորում են հայ երիտասարդների կեանքը: Այդ կեղտոտ կեանքի հետևանքն են վենէրական հիւանդութիւններ, որոնցով տանջվում է հայ երիտասարդութիւնը: Այդ վերջիններից յետ չեն մնում մանրավաճառ հայ ընտանիքները: Դրանք ապրում են մեծ մասամբ գետնափոր տներում: Ընտանիքի տիկինը կամ ամուսնու հայրենիքի քաղաքիցն է, կամ այստեղի ազախիններից: Նրանց կեանքը «չան կեանքից» վատթար է: Աղտոտութիւնները կորցրած, խանաւութիւնը, ընակարանների անմաքրութիւնը, հագուստի կեղտոտութիւնը և այլ տեսակ ազտեր սրանց անբաժան ընկերներն են: Եւ յաճախ եմ գործ ունեցել այդպիսի ընտանիքների հետ և միշտ տխուր տրամադրութեան ներքոյ հեռացել եմ այդ անբաղդ արարածներից: Ընթերցողներիս պատմեմ մի դէպք, որը բաւականին օրինակ կարող է լինել ասածներիս: Մէկ անգամ ճաշից յետոյ այցելութեան էի գնացել մի հայ ընտանիքի. այցելողների թւում կար նաև մի երևանցի կին, որը հագնված էր Երևանի ձևով: Եւ չիմանալով, որ դա Երևանեան հագուստ է և իմ հետաքրքրութիւնը գոհացնելու համար դիմեցի նրան.

—Տիկին, վաղուց է, որ Բօստօվումն էք:

—Մի ամիս է արդէն... Կարծես թէ տարի լինի:

—Որտեղացի էք:

—Երևանից:

—Ցուն, մուլք ունէք այնտեղ:

—Բա ոչ. բալամ, տուն ունեմ, բաղչա ունեմ, Նորագաւիթ գիւղում մեծ վարուցանք ունեմ:

—Ապա ինչն է ստիպել ձեզ Բօստօվ գալու:

—Ի՞նչ անեմ, որ ֆողը մտնեմ: Իմ մարդը շատ տարիներ է, որ այստեղ է և մի առուս աղջիկ գըտել ու նստել է: Վերկացայ եկայ, ամա ձմեռս եավինջիներ է տարել խարկով ծախելու համար: Նա անհետացել է, թողնելով 5—6 անդամներից բաղկացած ընտանիքն անտիրական: Դրա կինը գտնվում է սոսկալի վիճակի մէջ. մի տարեկան որդուն յանձնել է կառավարութեան ապահովութեան:

Մի քանի անգամ փող հաւաքեցին այստեղի մի քանի հայերը, բայց ոչինչ չօգնեց, ըստ որում Նախիջևանցիք չօգնեցին, յայտնելով որ իրանք իրանց հողի վրա բաւական աղքատ ունեն: Այս ճշմարիտ փաստերի վրա հիմնվելով խորհուրդ եմ տալիս այն հայերին, որոնք միտք ունեն տունն ու տեղը ծախել և Բօստօվ գաղթել, թող լաւ մըտածեն, որ Բօստօվ գնալով նրանք իսկոյն և եթ միլիոնատէր չեն դառնայ, որ իրանց երկրումն էլ կարող են փողի տէր դառնալ, եթէ լինեն զգոյշ և հեռատես, եթէ աշխատեն վաճառականական արուեստը սովորել: Ի՞նչու եւրօպացին գալիս է ձեզ մօտ և ահագին փողի տէր է դառնում, իսկ դուք՝ տեղացիքդ ձեր հայրենիքի հարստութիւնը մշակել չէք կարողանում:

Մի քանի ամիս սրանից առաջ Բօստօվի մի քանի հայ վաճառականներ, որոնք մի մի աստղեր են գաղթականութեան մէջ, ինչպէս, օրինակի համար եղբայրք Ցունանեաններ, Անպէտքեան, Եաղուբեան, Մաղաւուզեանց և ուրիշները հաւաքվեցին միասին խորհելու մի բարեգործական ընկերութիւն հիմնելու մասին. առաջարկվեց ինձ իմանալ Թիֆլիսից, թէ արդեօք նրանք կարող չեն Կովկասի հայոց Բարեգործական ընկերութեան ճիւղը բանալ Բօստօվում: Իմ հարցերիս բացասական պատասխան ստանալով, գրեցի նրանց: Այժմ ինձ անյայտ է թէ ինչ հետևանքի հասան նրանք:

Դառնանք միւս հարցին: Որքան մեծ է այդ գաղթականութեան մէջ բարոյական կրթութիւնը: Գլխաւորապէս միջին դասի մէջ բարոյականութիւնը իր ամբողջ ոյժով իչխում է. դուք կը գտնէք հայ ընտանիքներ, որոնք պահպանել են հայ ընտանիքին յատուկ տարրեր: Մի քանի ժամեր մնալով այդպիսիների մէջ, մոռանում ենք, որ Բօստօվումն ենք և մեր երևակայութիւնը փոխադրում է մեզ մեր հայրենիքը: Եւ պէտք է սև գոյնով նկարագրեմ հայ երիտասարդներին, որոնք այստեղ երկար ժամանակ ապրում են՝ և ընտանիքներ, որոնք կարճ ժամանակի ընթացքում մոռացել են իրանց պարզ և հասարակ սովորութիւնները և ընկել են ընդհանուր հոսանքի մէջ, մի խօսքով այնպէս փոխվել են, որ իրանց վրա հայութեան նշոյլ անգամ չէ մնացել: Մեր թերթերի մէջ քիչ նկատողութիւններ չեն երևացել Բօստօվի և Նոր-Նախիջևանի հայերի մասին. հեռու չէ այն ժամանակը, երբ մի թերթի մէջ տպված էր հետևեալ լուրը. «Մեր կողմերում ոչ մի տեղ այնքան տարածված չէ շռայլութիւնը, այնքան ընկած չէ բարոյականութիւնը, այնքան կատաղի չէ թղթախաղութիւնը և անառակութիւնը հայ երիտասարդ դասի մէջ, որքան Բօստօվում և Նոր-Նախիջևանում»: Այս խօսքերի ճշմարտութեան մէջ ամեն մարդ կը համոզվի, եթէ մի քանի շաբաթ մնայ այդ վերոյիշեալ քաղաքում: Մտէք դուք Բօստօվի պանդոկները. սենեակներից մէկի մէջ կը գտնէք հայ պարոններին, կանաչ սեղանի շուրջը նստած: Մտէք միւս սենեակը. նոյնպէս հայ երիտասարդներ, որոնց խօսակցութեան նիւթն իրանց կեղտոտ կեանքն է: Չը բաւականանալով դրանով, մտէք թատրոն, ցիրկ. կը գտնէք հայ երիտասարդներին նստած մի կարմրահեր, երեսը արուեստական կերպով սպիտակացրած օրիորդի, կամ կնոջ մօտ. այդ վերջիններն են հայ երիտասարդների աղախինները, որոնք ծծում ու թունաւորում են հայ երիտասարդների կեանքը: Այդ կեղտոտ կեանքի հետևանքն են վենէրական հիւանդութիւններ, որոնցով տանջվում է հայ երիտասարդութիւնը: Այդ վերջիններից յետ չեն մնում մանրավաճառ հայ ընտանիքները: Դրանք ապրում են մեծ մասամբ գետնափոր տներում: Ընտանիքի տիկինը կամ ամուսնու հայրենիքի քաղաքիցն է, կամ այստեղի ազախիններից: Նրանց կեանքը «չան կեանքից» վատթար է: Աղտոտութիւնները կորցրած, խանաւութիւնը, ընակարանների անմաքրութիւնը, հագուստի կեղտոտութիւնը և այլ տեսակ ազտեր սրանց անբաժան ընկերներն են: Եւ յաճախ եմ գործ ունեցել այդպիսի ընտանիքների հետ և միշտ տխուր տրամադրութեան ներքոյ հեռացել եմ այդ անբաղդ արարածներից: Ընթերցողներիս պատմեմ մի դէպք, որը բաւականին օրինակ կարող է լինել ասածներիս: Մէկ անգամ ճաշից յետոյ այցելութեան էի գնացել մի հայ ընտանիքի. այցելողների թւում կար նաև մի երևանցի կին, որը հագնված էր Երևանի ձևով: Եւ չիմանալով, որ դա Երևանեան հագուստ է և իմ հետաքրքրութիւնը գոհացնելու համար դիմեցի նրան.

—Տիկին, վաղուց է, որ Բօստօվումն էք:

—Մի ամիս է արդէն... Կարծես թէ տարի լինի:

—Որտեղացի էք:

—Երևանից:

—Ցուն, մուլք ունէք այնտեղ:

—Բա ոչ. բալամ, տուն ունեմ, բաղչա ունեմ, Նորագաւիթ գիւղում մեծ վարուցանք ունեմ:

—Ապա ինչն է ստիպել ձեզ Բօստօվ գալու:

—Ի՞նչ անեմ, որ ֆողը մտնեմ: Իմ մարդը շատ տարիներ է, որ այստեղ է և մի առուս աղջիկ գըտել ու նստել է: Վերկացայ եկայ, ամա ձմեռս

որովհետև ս. Փրկչի դպրոցը տեղիս Արղութեան օրիորդաց դպրոցին պարտք ունէր, և որովհետև Արղութեան դպրոցն այս տարի նորոգվել էր ի հարկէ, այդ պատճառով Արղութեան դըպրոցը պահանջեց ս. Փրկչի դպրոցից պարտքը և վերջինս ստիպվեց երկու բաժանմունքները փակել. բայց ժողովուրդը երբ տեսաւ, որ մօտ 300 տղաներ դպրոցից դուրս մնացին, բողոքեց և ստիպեց կրկին բանալ փակված բաժանմունքները: Այս դէպքում գովելի է մեր քաղաքի առաջնորդ հայր Գարեգին Սաթունեանի եռանդը դէպի դպրոցը և գեր. հօր շնորհիւն էր, որ 300 տղաներն աղատվեցան փողոցային կեանքից և մտան դպրոց:

Զը նայելով որ Կովկասի շատ քաղաքներում Տէրունական օրը, կիրակին, սուրբ է պահվում, բայց մեզ մօտ դեռ շարունակում են կիրակի օրը գործել, կարծես կիրակի օրը մեր ժողովրդի համար չը կայ: Շատ լաւ կը լինէր, որ ստիպէին փակ պահել վաճառատները և կաֆէյները, տրակտիրները և այլ դրանց նման տեղերը: Ժողովուրդը կարիք ունի բարոյական սնունդ ստանալու, հանգստանալու և քրիստոնէավայել ապրելու:

Մօտ մի տարի է, որ մեզ մօտ հաստատվել է «Կովկասի հայոց Բարեգործական ընկերութեան» տեղային ճիւղը. ընկերութիւնը ունի մօտ 100 անդամներ, սակայն ընկերութիւնը ոչ մի գործ չը կատարեց, այլ մնում է դեռ թղթի վրա. ի՞նչ միտք կայ անդամական վճար ստանալ և ոչինչ գործ չը կատարել: Անդամների ցանկութիւնն էր ունենալ հասարակաց «Մատենադարան-ընթերցարան», օգնել չքաւոր ընտանիքներին, պահել մի քանի սաներ չքաւոր ընտանիքի զաւակներից և այլն, սակայն մինչև օրս ոչինչ գործ չէ կատարվել, չը նայելով որ մի ամբողջ տարի է անցել:

Քաղաքիս մէջ ամեն տարի կատարվում էր հողերի ձրի տիրելը. օրինակ մէկը ստանում էր 100 սաժէն հող և մի քանի տարուց յետոյ տեսնում էիք ունի 1,000 սաժէն, նայելով թէ ով որքան և ինչպէս կարող էր յափշտակել. այդ անկարգութիւնները վերջացնելու համար մեր Նահանգապետ պ. Ֆրէզէ կարգադրեց կազմել մի յանձնաժողով, գեներալ-լէյտենանտ Պրեասկուրեակովի նախագահութեամբ, որ հսկէ քաղաքային հողերի վրա և ապօրինի տիրած հողերի համար հողատէրերից առնէ ամեն մի սաժէնի համար 1 ր. 40—60 կոպ., նայելով տեղին և յարմարութեանը: Իսկ օրինաւոր զօկումենտ ունեցողներից առնել սաժէնին 10 կոպ.: Այդ յանձնաժողովը արդէն սկսել է իր գործունէութիւնը. սկսել է քրքրել 1872 թուի զօկումենտներից սկըսած մինչև ներկայ 1891 թիւը: Պէտք է նկատել, որ շատ խոշոր գումար կը գոյանայ այդ տեղերից:

Այս ամառ երկու անգամ մեր քաղաքն այցելեց Երևանի Նահանգապետ պ. Ֆրէզէ. առաջին անգամ յայտնեց, որ մեր քաղաքը շուտով կունենայ իր քաղաքային վարչութիւնը և դումա. վճռեց վերջնականապէս քաղաքիս այգեպանների և այգետէրերի կնճռված գանգատը, որը 1866 թուից սկսած քաշքշվում էր, երբեմն յօգուտ քաղաքի էր վճռվում, երբեմն յօգուտ այգեպանների: Պ. Նահանգապետը խոստացաւ շուտով բանալ «Արհեստագիտական» դպրոցը. գաւառիս չինականներին հրամայեց վերջնականապէս վերջ դնել ասիական սայլերին և սկսել գործ ածել նոր չորս անիւաւոր սայլեր, որոնք շատ յարմար են երկրագործութեան համար. այդ օրից մէկ մէկ փոխվեցան մեր չինականների սայլերը և այժմ քաղաքիս մէջ կան 18 արհեստանոցներ, որոնց պարապմունքն է անդադար սայլեր չինելը. ամբողջ Շիրակում սկսել են նոր սայլեր գործ ածել:

Պ. Նահանգապետի այդ մարդասէր կարգադրութիւնը շատ օգտակար և շնորհակալութեան արժանի է:

Շիրակեցի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ինչպէս յայտնի է, ներքին Ռուսաստանի մի քանի նահանգներում այս տարվայ հունձի անաջող լինելու պատճառով, սով է տիրում և ահա ռուսաց «Կարմիր Խաչի» ընկերութեան կովկասեան կենտրոնական վարչութիւնը ուղարկելով մեզ հետևեալ յայտարարութիւնը, խնդրում է մեզ տպագրել այդ յայտարարութիւնը «Մշակի» մէջ, իսկ հայոց միւս լրագիրներին խնդրում է մեր թերթից արտատպել այդ յայտարարութիւնն իրանց էջերում: Ահա յայտարարութիւնը. «Նուիրատուութիւնները անաջող հունձից վնասված աղգաբնակութեան օգտին, ընդունվում են Ռուսաց «Կարմիր Խաչի» ընկերութեան կովկասեան բաժնի գանձապահի, դէյստվիտելնի ստատսկի սովէտնիկ Մուլինի մօտ և նմանապէս անդրկովկասեան իգական իստիտուտի դիւանատանը, ամեն օր, բացի տօն օրերից, առաւօտեան 10 ժամից, մինչև 2 ժամ կէսօրից յետոյ: Բոլոր նուիրատուութիւնները, համեմատ ընկերութեան գլխաւոր վարչութեան կարգադրութեան, կուղարկվեն ընկերութեան Սարատովի բաժնին, որը տեղական քաղաքացիական վարչութեան և հոգևոր իշխանութեան օգնութեամբ՝ կը կազմակերպի «Կարմիր Խաչի» հոգաբարձութիւն, կարօտ աղգաբնակութեանը հարկաւոր օգնութիւն հասցնելու նպատակով, ղեկավարվելով օգնութեան հասցնելու գործում տեղի վրա մշակված ամենայարմար միջոցների ծրագրով, և հոգաբարձութեան անդամների գործի մէջ անմիջական մասնակցութեան պայմանով:»

—

Բժշկապետ Ց. Գասպարեանց այս օրերս վերադարձել է ԹԻՖԼԻՍ արտասահմանում այս ամառ իր արած ճանապարհորդութիւնից:

—

Կիրակի, ամսիս 22-ին, կէսօրվայ ժամի 1-ին, Թիֆլիսի Կաթոլիկաց փողոցում, մի լեհացի երիտասարդ ատամնաբոյժ իր բնակարանում անձնասպանութեան փորձ արեց, ատրճանակի հարուածը դէպի փորը ուղղելով և վտանգաւոր կերպով վիրաւորելով իրան: Անձնասպանութեան փորձ անելու պատճառները թէև յայտնի չեն, բայց շատերը պատմում են այսպէս. երկու տարի սրանից առաջ յիշեալ երիտասարդը յայտնվելով Թիֆլիսում, ծանօթանում է մի հայ-կաթոլիկ յայտնի ընտանիքի հետ. քիչ ժամանակից յետոյ երիտասարդին աջողվում է պսակվել այդ ընտանիքի աղջկայ հետ, և մի հիւրանոցում իր կնոջ հետ երեք օր ապրելուց յետոյ, վերցնում է նրա օժիտ կազմող ութ հազար րուբլին և անհետանում Թիֆլիսից. թշուառ կինը, երկար որոնելուց յետոյ, վերջապէս Ռուսաստանում գտնում է իր ամուսնուն և նրա հետ միասին վերադառնում Թիֆլիս: Ատամնաբոյժ երիտասարդը Թիֆլիսում է բոլորովին պրակտիկա չունէր և ամբողջ երկու տարի իր ամուսնու հետ ապրում էր իր աներոջ հաշուով: Վերջերս յայտնվում է, որ այդ մարդը երկրորդ անգամ է պսակվել և առաջին կինը կենդանի է, որից ունի և զաւակներ: Այդպիսով դժբաղդը, օրէնքի առաջ պատասխանատուութիւնից ազատվելու համար, վճռում է իր կեանքին վերջ տալ:

—

Ուրբաթ, ամսիս 20-ին, երեկոյեան, Անդրկովկասեան երկաթուղու մարդատար գնացքով Թիֆլիս ժամանեց բէլգիական մինիստր-ռէզիդէնտ պ. դը-Էպիրի, որին երկաթուղու կայարանում դիմաւորեցին Թիֆլիսում ապրող բէլգիացիք և Թիֆլիսի բէլգիական հիւպատոսը: Պ. մինիստրի համար պատրաստված էին կայարանի արքայական սենեակները, ուր նա թէյ և ընթրիք վայելելուց յետոյ, մի և նոյն գնացքով ուղևորվեց Բագու, որտեղից կը գնայ Պարսկաստան:

—

«Իվէրիա» լրագիրը հաղորդում է, որ Կովկասը ուսումնասիրելու համար, ուրբաթ, ամսիս 20-ին, Թիֆլիս ժամանեցին երկու աւստրիական գեներալներ,—պ.պ. Ալէքսանդր Գիրնէր և Լուդվիգ Գլէդուս-Դէտիղավալ:

—

Ինչպէս յայտնի է, Ախալցխայի այժմեան յաջորդ Յովհաննէս վարդապետ Շիրակունի Թիֆլիսի ս. Սարգիս վանքի վանահայր եղած ժամանակ մեծ ջանք գործ դրեց այդ ուխտատեղին վերանորոգելու և չքեղացնելու համար՝ ուխտաւորների համար նոր սենեակներ կառուցանելով, օրիորդաց դպրոցի երկյարկանի շինութիւնը կանգնեցնելով, վանքը գեղեցիկ պարսպով շրջապատելով, գաւիթը հարթացնելով, վանքի արդիւնքները կարգի բերելով և այլն և այլն: Այժմեան վանահայր՝ Յուսիկ վարդապետը, կամենալով իր նախորդի արածների վրա մի բան էլ ինքն աւելացնել, պահանջում է, որ հանդուցեալ Առաքել վարժապետ Արարատեանցի տնից դէպի եկեղեցին տանող մուտքը փակվի, և երբ հանդուցեալի ժառանգը մերժում է այդ, նա սկսում է յիշեալ տան դիմաց շինութիւն կառուցանել և այդպիսով փակել դէպի եկեղեցին 50 տարուց ի վեր գոյութիւն ունեցող մուտքը: Շինութիւնը Արարատեանցի տան կտուրի հաւասար բարձրացնելուց յետոյ, դատարանը ստիպում է դարձեալ քանդել և հիմքը Արարատեանցի տան հիմքին հաւասար սկսել, որը գրեթէ գտնվում է անդնդում: Այդպիսով շինութիւնը քանդվում է և վանքը ենթարկվում ահագին դրամական վնասների:

—

Թիֆլիսի ծածկված Բաղաղխանա կոչված նեղ ու մութ պասսաժը արդէն յայտնի է ամենին: Կարելի է դա այնքան էլ անտանելի չը լինէր, եթէ նոյն տեղի խանութպանները չը դիզէին ահագին քանակութեամբ ապրանքներ իրանց խանութների առաջ, որ առանց այն էլ նեղ անցքը չը սեղմվէր երկու կողմից: Պասսաժի նեղութեանը աւելացրէք և գործակատարների «что вамъ угодно, և ի՞նչ էք կամենումները». Այդպիսով գործակատարները անցնողների ճանապարհը կտրելով, գործակատարները մարդու գլուխ են ցաւացնում: Այդ տեղով առաջին անգամ անցնողն էլ կը նկատի գործակատարների անքաղաքավարութիւնը, մանաւանդ կանանց հետ: Վատ չէր լինի, եթէ ամեն օր ոստիկան լինէր կանգնած այդտեղ, կարգը պահպանելու համար և հրամայվէր գործակատարներին իրանց քաղաքավարութիւնը շատ էլ ծրայեղութեան չը հասցնել:

պէտք է նորից տուն եթամ: Էս մի ամիսն էլ նեղութիւն չը մնաց, որ չը քաշեմ:

—Ամուսինդ էլ պէտք է հետդ գայ, հարցրի ես:

—Մարդս ինքը գիտէ, իմ խօսքը նրա մօտ նշանակութիւն չունի: Ես հազար անգամ ասել եմ, հիւանդ ես, գնա տուն, այնտեղ կը բժշկվես և յետոյ էլի կը վերադառնաս. որ խօսքս չէ լսում:

Այս խօսակցութիւնից մտածմունքներն ինձ տանջում էին, տխրութիւնը պատել էր սիրտս: Մի՞թէ խեղճ հային ընդ միշտ վիճակված է գաղթել հայրենիքից դէպի սառնամանիք երկիրները, այն հայրենիքից, որը հարուստ է ընդարձակ դաշտերով, այգիներով, պարտէզներով, կարկաջահոս ջրերով, այն հայրենիքից, որի մէջ գտնվում է անթիւ հարստութիւն և որի վրա եւրօպացիք ժպտալով են նայում և նրանք, այդտեղ բուն դնելով ահագին հարստութիւններ են դիզում, իսկ մեր ազէտ հայը թողնում է իր ծննդավայրն ու հեռանում:

Անցնենք Նոր-Նախիջևանին:

Տասն և երեքերորդ դարում հայոց Բագրատունեաց թագաւորութիւնը վերջանալիս, սոսկալի թշնամին, սովը, հալածանքը իշխելուն պէս, Հայաստանը սկսեց անդադար դատարկվել, հայերը գաղթում էին խմբովին թէ հիւսիս և թէ արևմուտք: Շիրակ գաւառի բնակիչներն էլ ընտրեցին բնակութեան համար Վոլգա գետի ափերը և ապա այդտեղից գոհ չը լինելով, անցան Կրիմ: Այդտեղ նրանք բոլորովին ընտելացան, սկսեցին հողագործութեամբ և վաճառականութեամբ պարապել: Նրանք ուրախ էին իրանց նոր հայրենիքով, ըստ որում այդ վերջինը նոյնպիսի պտղաբեր և բարեխառն եղանակ ունէր, ինչպէս Շիրակը: Ի հարկէ, դարերից ի վեր հայերը այդտեղ այնպէս զարգացան ու բազմացան, որ տասն և հինգ և տասն և վեց դարերում Կրիմը անուանվեց Ծովային Հայաստան (Armenia maritima): 1769-ին Ռուսիայի Եկատերինա կայսրուհին պատերազմ յայտնեց Տաճկաստանին և նրա ձեռքից խլեց ամբողջ թերակղզին: Այս պատերազմից առաջ հայերը կրկին մտածեցին գաղթելու մասին և թողնելով իրանց հարուստ երկիրը, հողագործութիւնը, հարստութիւնը, վաճառականութիւնը 1776-ին դուրս եկան Կրիմից և մի տարի թափառելուց յետոյ կանգ առան Եկատերինոսլավլ գաւառում, ուր և ամռեցին, ապա և անցան 1777-ին այժմ Նոր-Նախիջևան, Դոնի աջ և բարձրադիր կողմը և 1779-ին ձեռք բերելով ռուսաց կառավարութիւնից խոստացած արտոնագրութիւնը (привиллегія) հիմնեցին Նոր-Նախիջևանը:

Անուրանալի ճշմարտութիւն է, որ Նոր-Նախիջևանի հայերը մեր վաճառականութեան և կըրթութեան պատմութեան մէջ մեծ տեղ են բռնում: Նոր-Նախիջևանը իր հիմնարկութեան առաջին օրերից ունեցել է իր ձեռքին բաւական մեծ առևտուր, որը տարածված էր Կրիմում, Դոնի ափերում և այլ վաճառաշահ երկիրներում: Մոսկվային հայերը ծանօթացան Նոր-Նախիջևանցիների միջոցով, ըստ որում Նրանք էին Մոսկվայի առաջին հայ վաճառականները: Խօսք չը կայ, որ այսօր ևս Նոր-Նախիջևանցիք հմուտ վաճառականներ են, բայց քաղաքում չը կայ վաճառականութիւն. այդ քաղաքը, ըստ գերմանական տեսակէտի, կարելի է արիստոկրատիական քաղաք համարել. հայը այնտեղ ապրում է, ունի իր կալուածները, իսկ խանութը և առևտուրն ունի նա Ռոստովում կամ մի այլ քաղաքում: Կրթութեան գործի մէջ Նոր-Նախիջևանցիք կրկին առաջին տեղն են բռնում. նրանք էին, որ առաջին անգամ իրանց զաւակներին ուղարկեցին Մոսկվա կրթվելու համար, Լազարեան ճեմարանի մէջ հարիւրաւոր հայ ուսանողներ են եղել, վերջապէս Նալբանդեան, Պատկանեաններ ծնունդ են այդ քաղաքի:

Ժամանակակից Նոր-Նախիջևանը Ռոստովի կատարեալ հակապատկերն է ներկայացնում: Այստեղ ծաղկած վաճառականութիւն, կեանք, բանւորների աշխարհ, այնտեղ հանգստութիւն, լռութիւն, մեռելութիւն և ձգտումն արիստոկրատիական կեանքի: Այստեղ մի ռուսական քաղաք, այնտեղ մի հայկական, ուր մինչև անգամ օտարն էլ հայերէն է խօսում:

Նոր-Նախիջևանի բնակիչների թիւը հասնում է մինչև 30 հազարի, որոնցից միմիայն 12—14 հազարը զուտ հայեր են, մինչդեռ մի քանի տասնեակ տարիներ սրանից առաջ բոլորն էլ հայեր էին: Այդ քաղաքի հայ բնակիչների թիւն օրից օր պակասում է, ըստ որում նրանք մեծ մասամբ գաղթում են Ռոստով և այդ վերջինի բանւոր դասն էլ բնակարանի էժանութեան պատճառով անցնում է Նոր-Նախիջևան և այդպիսով ինտելիգենտ դասակարգը նուազում է և բանւորը զօրանում: Գուցէ շատ տասնեակ տարիների ընթացքում Նոր-Նախիջևանը ենթարկվելով այդ հոսանքին, մի բանւորական քաղաք դառնայ:

Չը նայելով որ քաղաքի բնակիչների մեծ մասը օտարազգի են, քաղաքային վարչութիւնը ամբողջապէս գտնվում է հայերի ձեռքին, որի գլուխն է անցած մի եռանդուն հայ վաճառական: Այդ վարչութեան գործունէութեան մասին ես անկարող եմ կարծիք յայտնել. որքան ականջիս է հասել, հասարակութիւնը շատ գոհ չէ, իսկ ինչ վերաբերում է քաղաքագլխին, այն է՝ պ. Բալաբանեանցին, պէտք է խօստովանվել, որ նա շատ եռանդոտ, ազդու, վարչական ընդունակութիւնների և կամքի տէր մարդ է: Ասեցի, որ վարչութեան անդամների մէջ չը կայ օտարազգի: Այդ պատմական պատճառ ունի: Վաղուց ի վեր Ռոստովի և Նոր-Նախիջևանի քաղաքային վարչութիւնները լարված դրութեան մէջ են գտնվում: Եթէ Ռոստովի ձայնաւորների ընտրողական ցուցակի մէջ լինում է մի հայի անուն, այդ վերջինին իսկոյն և եթ սևացնում են, Նոր-Նախիջևանցիք տեսնելով իրանց հարևանների վարմունքը, նոյն ձևով են անում: Թէ ի՞նչ տեղից է ծագել այդ թշնամական յարաբերութիւնը, ինձ բոլորովին անյայտ է: Բացի այդ վաղուց է, որ խնդիր կայ պրծարծված կառավարչական շրջաններում Ռոստովը Նոր-Նախիջևանի հետ միացնել. այդ հարցն աւելի ուժեղ երևան եկաւ Ռոստովի Բայկով քաղաքագլխի օրով, որը սկսեց գրչով յարձակվել հայերի վրա և առաջարկել Նոր-Նախիջևանը միացնել Ռոստովի հետ, բայց այդ առաջարկութիւնը մնաց «ձայն բարբառոյ յանապատի», ըստ որում Նոր-Նախիջևանցիք անաչառ կերպով սկսեցին քննել քաղաքագլխի յարձակումն և ջրել նրա փաստերն ու կարծիքը: Պարզ բան է, որ Նոր-Նախիջևան չէր համաձայնվի միանալ Ռոստովի հետ, ըստ որում առաջինն անհամեմատ հարուստ է երկրորդից: Կառավարութեան այդ դիտաւորութիւնը մասամբ իրագործված կարելի է համարել, ըստ որում Նոր-Նախիջևանը չունի այլ ևս մի քաղաքային ոստիկանական մարմին, այլ դարձել է Ռոստովի ոստիկանական ծխերից (участокъ) մէկը:

(Կը շարունակվի)

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅԱԿՈԲ ՓԱՇԱ ԳԱԶԱԶԵԱՆ

—

Հանգուցեալ Յակոբ փաշա ծնած էր 1832-ին մօտերքը, և ինչպէս իր մականունն ալ ցոյց կուտայ պարզ էնաֆի մը դասակարգէն էր։ Բնականաբար վաթսուն տարի առաջ նա չէր կրնար հիմնական կրթութիւն մը ստանալ, բայց իր մայրենի լեզուէն զատ սորվեցաւ թուրքերէն, բաւական ֆրանսերէն. առևտրական գործերով կը զբաղէր։

Երբ Բերայի Թաղ. Խորհրդոյ անդամ էր, այդ միջոցին Կալաթա Սէրայի ոստիկանութեան ժողովին անդամ անուանեցաւ։ Բաւական ժամանակ այս պաշտօնը վարելէ յետոյ 1873-ին Վոյվոտայի քայմաքամ եղաւ։ Այդ պաշտօնին մէջ շատ կը յողնէր և կը փափագէր ուրիշ պաշտօն մը գտնել նուազ յողնեցուցիչ։ Իբր քայմաքամ ամիսը կառնէր 800 կամ 1000 ղրշ. սակայն իր բարեկամներէն կը խնդրէր, որ իրեն ուրիշ պաշտօն մը գտնեն, հոգ չէ մինչև 500 ղրշ. ըլլայ ամսականը, բաւական է որ յողնութիւնը քիչ ըլլայ։

Այդ միջոցներուն էր 1874 թուականին որ Օմ. Պանքային մէջ երեան ելան զեղծմանց գործեր և մեծ դատաստանի մը հարկն անհրաժեշտ եղաւ։ Շատ մը հայեր ամբաստանուած էին այս զեղծմանց մէջ։ Այս հայեր թէ Պանքայի պաշտօնեայներ էին և թէ այդ պաշտօնեայներու հետ յարաբերութիւն ունեցող դուրսէն անձինք։ Պանքայի պահեստի դրամէն 100,000 ոսկի անհետացած էր, և այս դրամը կորսուած էր պորսայի քօնսոլիտի խաղերուն մէջ։ Քիչ մը անբնական կը թուէր, որ այդպիսի գումար մը անհետանայ երրորդական պաշտօնեայներու ձեռքով առանց տնօրէններու և դանձապետներու ուշադրութիւնը հրաւիրելու։ Պահեստի գումարն 250,000 ոսկի էր, ինչպէս կարելի էր այդ գումարին գրեթէ կէսն անտես ընել։ Թէ Եւրոպա և թէ ի Պոլիս այս գործ մեծ արձագանգ գտաւ. ի մասնաւորի «Սթամբուլ» թերթը խստիւ քննադատեց Պանքայի վարչութիւնը. «Սթամպուլի» տրամաբանութիւնն այնքան կուռ և լեզուն այնքան խիստ էր, որ Պանքայի տնօրէն Պ. Տըվօ կարդալով դպնս բարկութենէն կարտասուէր։

Պ. Տըվօ և դանձապետ Պ. Սմայթ շատ ծանր կացութեան մէջ էին։ Ճարտար անձ մը որ տեղական հանգամանքներուն ծանօթ ըլլայ իրենց անհրաժեշտ էր։ Յակոբ էֆէնտի հրաւիրուեցաւ այդ պաշտօնին. դատարանին մէջ Պ. Սմայթի թարգմանն էր թէպէտև, բայց գրեթէ փաստաբան մը եղաւ նաև։ Մեծ մասամբ շնորհիւ Յակոբ էֆէնտիի ճարպիկութեանն ու տաղանդին, պ. Տըվօ և պ. Սմայթ անվնաս ելան գործին մէջէն։

Յակոբ էֆէնտի Օսմանեան պանքային մէջ, 30 ոսկի ամսականով երկրորդական դիւանատան մը պետն եղաւ, և այլ ևս բարեբաղդ էր։ Բայց միայն դժբաղդութիւնները չեն որ խմբովին կուգան այլ և յաջողութիւններն ալ։

Իր նոր պաշտօնին առթիւ յարաբերութիւններ ունեցաւ Պալատականաց հետ, ի մասնաւորի սենեկապետ Օսման պէյի հետ։ Այս միջոցին էր նաև որ Վեհ. Սուլթանը ուզելով կարգի դնել իւր Անձնական Գանձուն մատակարարութիւնը, հարցուցած էր Օսմ. Պանքայի տնօրէն պ. Ֆօսթէրի թէ՝ արդեօք Պանքայի պաշտօնեայներուն մէջ կը գտնուի հաշուակալութենէ հասկցող և միանգամայն մատակարարութեան ընդունակ տաճկերէն գիտցող անձ մը։ Պ. Ֆօսթէր յանձնարարեց Յակոբ էֆէնտին, որ կոչուեցաւ յանդամակցութիւն կայսեր Անձնական Գանձուն բարեկարգիչ յանձնաժողովոյ։

Այս պաշտօնին մէջ Յակոբ էֆ. ցոյց տուաւ մատակարարութեան համար իր ունեցած կարողութիւնները։ Վեհ. Սուլթանը շատ գոհ մնաց Յակոբ էֆէնտիի աշխատութիւններէն և 1879-ին անուանեց զնա տնօրէն (միւտիր) Անձնական Գանձուն։ Յակոբ էֆէնտի կը յաջողէր Հասան Ֆէհմի փաշայի։ Քիչ ատենէն տնօրէնութիւնը փոխուեցաւ նախարարութեան, և Յակոբ փաշա բարձրացաւ վէզիրութեան։ Մինչև իւր մահուան օրը Յակոբ փաշա պահեց այդ պաշտօն։ Յայտնի է թէ ինչպէս միշտ Վեհ. Սուլթանին գոհունակութեանն արժանացաւ, իբր կարող մատակարար և իբր անձնուէր ու հաւատարիմ ծառայ։

Իր պաշտօնը պահելով հանդերձ երկու անգամ ալ ելևմտից նախարար անուանեցաւ։ Առաջին անգամ 1888 դեկտ. ամսոյ մէջ կը յաջորդէր Զիւհտի փաշային։ Երկու ամիս միայն այս պաշտօն վարեց։ Իսկ երկրորդ անգամ 1889-ին կը յաջորդէր Մահմուտ Ճէլալէտտին փաշայի։ Այս անգամ տարիէն աւելի մնաց այդ պաշտօնին մէջ։

Իբր ելևմտից նախարար Յակոբ փաշա մեծամեծ ծառայութիւններ մատոյց Մալիյէին, և ընդհանուր եւրոպական համբաւ մը ստացաւ. անխտիր բոլոր եւրոպական թերթերը միշտ գովեստիւք կը խօսէին Թիւրքիոյ ելևմտից այս նախարարին վրայ։ Գանձուն նախարար եղած ժամանակ իր գլխաւոր գործերն եղան Տայչ Պանքայէ ըրած փոխառութիւնը, և Բրիօրիթէ ու տախիլիէ քօնվերսիօնը։

Կարգադրեց նաև Օսմանեան պանքայի և Մալիյէի հաշուոց խնդիրն։ Յաջողեցաւ իրաւամբ զեղջել տալ Օսմանեան պանքայի պահանջէն 4,000,000 ոսկի։ Այս արդար զեղջն ինքնին մեծ ծառայութիւն մըն էր երկրին։

Այս հաշուի խնդիրներու առթիւ Յակոբ փաշա վարուեցաւ ոչ թէ իբր նախկին պաշտօնեայ մը այն պանքային, որուն պարտական էր իր յառաջացումն, այլ իբր հաւատարիմ պաշտօնեայ նորին կայսերական վեհափառութեան։

Պանք Օթօմանի և Յակոբ փաշայի միջև բարեկամական յարաբերութիւնք զրեթէ խզուեցան. մասնաւորապէս պ. Տըվօ թշնամացաւ Յակոբ փաշայի։ Ցայտնի է թէ՝ ինչպէս քիչ յետոյ պ. Ֆօսթէր և պ. Տըվօ հրաժարուեցան։ Սըր Էտկար Վինսընդի օրով Պանքային յարաբերութիւնք վերատին լաւացան Յակոբ փաշայի հետ։

Իբր հայ, Յակոբ փաշա երբ էֆէնտի էր, զանազան ազգային պաշտօններ վարած է. Բերայի Թաղ. Խորհրդոյ անդամ եղած է, երեսփոխան եղած է, Քաղ. Ժողովի անդամ եղած է։

Իսկ փաշայութեան օրովն անցեալ տարի, 1890-ին, յուլիս ամսոյ մէջ, ընկերակցութեամբ Տատեան Արթին փաշայի, և հանդուցեալ Վահան էֆէնտիի, բանակցութիւններ ունեցաւ իր տան մէջ Տ. Խորէն Պաարիարքի հետ, Ն. Սրբազնութեան հրաժարականն ետ առնել տալու համար։

Թէպէտև իր անունը շատ չը յիշուիր ազգային բարեգործական նուիրատուներու ցանկին մէջ, բայց Յակոբ փաշա կը յիշէր Աւետարանի պատուէրը թէ, «ինչ որ աջ ձեռքդ տայ ձախ ձեռքդ չիմանայ»։ Եւ ըստ այսմ իր բարեգործական պարտականութիւնները կատարած էր։ Այս մասին անոնք թող խօսին որոնց միջոցաւ որ նուէրներ եղած են եկեղեցիներու և բարեգործական հաստատութեանց։ Կըսուի նաև թէ հանգուցեալը դիտաւորութիւն ունէր դպրոց մը կառուցանելու։

Յակոբ փաշա զօրաւոր կամքի տէր, անաչառ և անարատ նախարար մը եղաւ։ Սիրելի եղաւ իր Վեհապետին, սիրելի եղաւ ընդհանուր երկրին, ակնածելի եղաւ Եւրոպոյ, և իր մահն իրաւամբ ընդհանուր ցաւ ու վիշտ կը պատճառէ համայն Թուրքիոյ մէջ։

(Հայրենիք)

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Լրագիրներին հաղորդում են, որ չինացիները մեղադրում են անգլիացիներին, որ զրանք հրազէնքներ են ուղարկում ապստամբներին։ Եւրոպացիներին պաշտպանելու համար ուղարկված միջազգային նաւատորմը արդէն մտել է Դեղին գետը։

—Հռոմից հեռագրում են, որ Իտալիայի ֆըբանսիական դեսպանը Նիցցա քաղաքի կողմից Ումբերտոս թագաւորի կառավարութեանը հրաւէր ուղարկեց ուղարկել իտալական միջպաշտօնական ներկայացուցիչ Գարիբալդիի արձանի բացման հանդիսին։ Մարկիզ Դէ-Ռուդինի դեռ ևս չէ վճռել թէ ումը կուղարկի Նիցցա։ Հաւանական է, որ այնտեղ կուղարկվի առաջ Գարիբալդիի մօտ ծառայող գեներալներից մէկը։

—«Kreuz-Zeitung լրագիրը հաղորդում է, որ ռումինական Կարլ թագաւորը դիտաւորութիւն ունի իր ճանապարհորդութեան ժամանակ տեղեկանալ Ումբերտոս թագաւորից և Վիլհելմ կայսրից թէ արդեօք երեքպետեան դաշնակցութիւնը համաձայն կը լինի պաշտպանել Ռումինիան, եթէ Ռուսաստանը յարձակում գործի նրա վրա, որովհետև Բուխարեստում համոզված են, որ Ռուսաստանը դիպլոմատիական յաղթութիւն տանելով Դարդանէլի հարցում, կաշխատի թոյլտուութիւն ստանալ ռումինական կառավարութիւնից, որպէս զի նրա զօրքերը ազատ կերպով կարողանան անցնել Դօբրուջայի միջով։

—Անգլիական լրագիրները հաղորդում են, որ արտաքին գործերի մինիստրի օգնական սրը Ջէմս Ֆէրգիւսոն պօստի և հեռագրական մինիստր է նշանակված։

—«Figaro» լրագրի Լօնդօնի թղթակցի հաղորդած տեղեկութիւնների համեմատ, Գլադստոն Նիւկասլում արտասանելի իր ճառերի մէջ քննադատութեան կենթարկէ գլխաւորապէս այժմեան կառավարութեան արտաքին քաղաքականութիւնը։ Գլադստոն կը խօսի յօգուտ խաղաղութեան պահպանման և կը յայտարարէ, որ Անգլիան ամենեին չը պէտք է խառնվի բալկանեան թերկակղզու գործերում։

—Կ. Պոլսից հեռագրում են, որ Կ. Պոլսի իտալական դեսպան Բլանկ հրաժարական է տուել,

—Լեոն XIII պապը, որպէս հաւատացնում են, պաշտօնապէս յայտարարել է, որ ինքն կոմս Մոնտեբելլօին պատուաւոր պարգև կը չնորհի այն հովանաւորութեան համար, որ նա ցոյց էր տալիս կաթոլիկ միսիոնարներին Արևելքում, երբ նա Կ. Պոլսի դեսպան էր։

—Ուխտաւորներին տրված ունկնդրութիւնները շատ են յողնեցնում պապին։ Սեպտեմբերի 11-ին (22-ին) ընդունելով սպանիացի ուխտաւորներին, պապը չը կարողացաւ կարդալ իր ճառը և յանձնեց այդ ճառը կարդալու կարդինալ Նոչէլլային։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 սեպտեմբերի։ «Биржъ. Вѣд.» լրագիրը հաստատ աղբիւրներից հաղորդում է, որ դաշտերը սերմանելու և ազգաբնակութեանը ուտեստի պաշար մատակարարելու համար որոշված գումարը, որը հասնում է արդէն 20 միլիոն գումարի, վերցված է 1890 թուի համար պետական ծախսերի աւելուածներից, որոնք, որպէս լսվում է, հասնում են 66 միլիոն գումարի։—Պետերբուրգի առևտրականների ընտրեալների ժողովը երէկ միաձայն որոշեց տալ յօգուտ սովատանջների 25,000 ր. հասարակական գումարներից։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 սեպտեմբերի։ Հրատարակված է Բարձրագոյն ուկազ 1891 թուի ռուսաց 3% ոսկու փոխառութեան մասին, երկաթուղիներ կառուցանելու համար եղած ծախսերը ծածկելու և հասարակական այլ հանրօգուտ աշխատանքներ կատարելու նպատակով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 սեպտեմբերի։ «Свѣтъ» լրագրի հատով ծախելը նորից թոյլ է տրված։

ԲՐԻՍԷԼ, 21 սեպտեմբերի։ Մէխէլնեան եպիսկոպոսը, չը նայելով միջնորդութեանը, չը թոյլատրեց եկեղեցական կարգ կատարել Բուլանժէի վրա, և այդ պատճառով թաղումը քաղաքացիական կը լինի։ Գերեզմանի վրա ճառեր չեն խօսվի։

ՍՕՖԻԱ, 21 սեպտեմբերի։ Արդարադատութեան մինիստր Տօնչէվ հրաժարական տուեց, նախատեսնելով, որ դիմադրութեան կը հանդիպէ ժողովում, որը կը գումարվի հոկտեմբերի 15-ին (27-ին)։ Արդարադատութեան մինիստրութիւնը ժամանակաւորապէս կը կառավարի Գրէկով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 սեպտեմբերի։ Երէկ Վլադիմիր և Ալէքսի Ալէքսանդրովիչ Մեծ Իշխանները և Մեծ Իշխանուհի Մարիա Պավլօվնա ճանապարհ ընկան Պարիզ, իսկ այնտեղից Սան-Սեբաստիանս։—Այսօր կէսօրին թագաւոր Կայսրը, թագուհի Կայսրուհին, Թագաժառանգ Ցէսարեվիչ, Մեծ Իշխանուհի Կսէնիա Ալէքսանդրովնա և յունաց թագաւորական զոյգը ծովով ճանապարհ ընկան Դանիա։

ՎԻԵՆՆԱ, 22 սեպտեմբերի։ Ռումբերը Բէյխէնբերգի մօտ դնող յանցաւորը դեռ չէ գտնվել։ Մանրամասն քննութիւնից երևաց, որ պայթիւնը մեծ վնաս է հասցրել, քան թէ առաջ կարծում էին. ճեղքուածներ երևացան և կամուրջի հիմնական պատերի մէջ։

ԿՕՊԷՆՀԱԳԷՆ, 22 սեպտեմբերի։ Ռուսաց Կայսերական Զոյգին Օգոստափառ երեխաներով և յունաց արքայական զոյգին սպասում են երեքշաբթի Ֆրէդէնսբօրգում։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱ

Սեպտեմբերի 20-ին

Լօնդոնի վրա 10 ֆունտ արժէ . .	94	ր. 30	կ.
Բերլինի վրա 100 մարկ — . .	46	» 25	»
Փարիզի վրա 100 ֆրանկ — . .	37	» 20	»
Ոսկի — — արժէ . .	7	» 57	»
Մաքսային կուպօններ — . .	151	» 25	»
Արծաթ — — — . .	1	» 14	»
Բօրսային դիսկօնտներ — . .	5	» 7¼	»
Պետ. բանկի 5% տոմս 1 շրջանի . .	102	» 50	»
— — — — 2-րդ —	102	» 75	»
— — — — 3-րդ —	—	» —	»
— — — — 4-րդ —	—	» —	»
— — — — 5-րդ —	—	» —	»
— — — — 6-րդ —	102	» 37	»
6% ոսկեայ րէնտա	155	» —	»
4% ոսկեայ փոխառութիւն	—	» —	»
Արևելեան 5% փոխառ. 1-ին շրջ.	—	» —	»
— — — — 2-րդ —	101	» 87	»
— — — — 3-րդ —	103	» 12	»
Ներքին 5% առաջին փոխառութ.	237	» —	»
— — երկրորդ —	221	» —	»
Պետական. երկաթուղային րէնտա .	103	» 75	»
5½% րէնտա	—	» —	»
4% ներքին փոխառութիւն	96	» 75	»
4% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	95	» 87	»
Ազն. կալ. բանկի խաղարկութեան գրաւ. թղթ. — — ,	101	» 75	»
5½% վկայակ. գիւղ. հող. բանկի.	105	» 75	»
4½% գրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդիտ. ընկեր. մետալ. .	145	» 75	»
— — — թղթադ.	101	» —	»
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օբլիգացիաները. .	101	» —	»
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ.	100	» 62	»
Օդէսայի — — .	101	» —	»
Թիֆլիսի — —	—	» —	»
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի.	—	» —	»
— — Քութայիսի — — .	—	» —	»

Ս. Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը խաղաղ է։

ՏԵՂԵԿԱՑՈՅՑ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Փօստային գնացքը ուղևորվում է

ԹԻՖԼԻՍԻՑ դէպի Բաթում . .	8 ժ.	40 ր.	առաւ.
ԲԱԹՈՒՄԻՑ գալիս է Թիֆլիս .	11 »	8 »	երեկ.
ԹԻՖԼԻՍԻՑ դէպի Բաքու . . .	12 »	8 »	երեկ.
ԲԱԳՈՒԻՑ գալիս է Թիֆլիս . ,	7 »	40 »	առաւ.

Ապրանքա-ճանապարհորդական գնացքը

ԹԻՖԼԻՍԻՑ դէպի Բաթում . .	3 ժ.	10 ր.	ցերեկ
ԲԱԹՈՒՄԻՑ գալիս է Թիֆլիս. .	8 »	» »	առաւ
ԹԻՖԼԻՍԻՑ դէպի Գանձակ . .	9 »	45 »	առաւ
ԳԱՆՁԱԿԻՑ գալիս է Թիֆլիս .	8 »	20 »	եկեկ.

—

ՌՈՒՍԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՇՈԳԵՆԱՒԵՐ

ՀԻՆԳՇԱԲԹԻ օրերը, երեկոյեան 4 ժամին, ուղղակի բէյսով, Նովորոսիյսկի վրայով։

ՇԱԲԱԹ օրերը, 8 ժամին երեկոյեան, շրջական բէյսով, բոլոր նաւահանգիստների վրայով։

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ օրերը, 7 ժամին երեկոյեան, արտասահմանեան բէյսով դէպի Կ. Պոլիս։

Խմբագիր-հրատարակող՝ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ս. Էջմիածնի ուսումնարանական յանձնաժողովից պաշտօնապէս ընդունված նոր դասագիրք „Թուաբանական խնդիրներ և օրինակներ" Գրիգորիս Երզնկեանի՝ տարրական դասընթացք ա. և երկ. տարի, վաճառվում է Թիֆլիսի կենտրոնական գրավաճառանոցում, գինը 30 կ., գումարով գնողներին 20% զիջ. 1—3 (ե.)

Մամուլի տակից լոյս տեսաւ և վաճառվում է Թիֆլիսի կենտրոնական գրավաճառանոցում ԵՂԻՇԷԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ Վարդանի և Հայոց պատերազմի համար, Թարգ. Հ. Ղուկասեանց։ Գինը 60 կոպէկ։ Նոյն տեղը վաճառվում են՝

Ա. Արասխանեանց „Արևելեան ազգերի հին պատմութիւնը" . . . 1 ր.
Վ. Փափազեան „Գինեգործի աղջիկը" (Թիւրքահայոց կեանքից) . . 15 կ.
Գումարով գնողները սովորական զիջումն ստանում։ 1—3 (ե.)

Ը. կարգի մի ՎԱՐԺՈՒՀԻ կամենում է տեղ ունենալ հայ դպրոցներում։ Համաձայն է գնալ ուրիշ թեմ։ Հասցէն „Մշակի" խմբագրատանը։

1—5

ՎՐԱՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ, *յայտնելով հայոց պարբերական թերթերի խմբագրութիւններին և հայ գրքերի հրատարակիչներին, որ ներկայ տարվայ հոկտեմբերի 1-ից ընկերութիւնը ընդունելու է Ալէքսանդրեան այգում գտնվող իր սեփական գրախանութում վաճառելու համար հայերէն հրատարակութիւններ, խնդրում է ցանկացողներին ուղարկել յիշեալ գրախանութը իրանց գրքերը և պարբերական հրատարակութիւնները: Պայմանների մասին տեղեկանալ գրախանութի կառավարչից:*

1—3

Լոյս տեսան

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ *հետևեալ հրատարակութիւնները:*

1) Ե. Սպիրի՝ „Ուռենց Յովսէփ.“ *Թարգմ.* Ի. Յ. *գինն է* 15 *կ.* 2) Պարոնեան „Մծապատիւ մուրացկանները.“ *գինն է* 40 *կ.:*

Ընկերութեան անդամներն այդ գրքերը կարող են ստանալ կենտրոնական գրավաճառանոցից, ներկայացնելով իրանց անդորրագրերը:

1—2

Պատիւ ունեմ յայտնել ի գիտութիւն հասարակութեան և այն անձանց, որոնք յանձն են առել բաժանորդ հաւաքել իմ Գեղարուեստական ալբոմին—հայ գործիչների, թէ ի նպատի ունենալով որ չուտով լոյս է տեսնելու ալբոմը, ես անհրաժեշտ համարեցի ստորագրութիւնների ժողովելը մի տեղ կենտրոնացնել, այն է Թիֆլիս, կենտրոնական գրավաճառանոցում: Այս պատճառով խոնարհաբար խնդրում եմ բաժանորդագրութեան տարածման գործակիցներին, որ բարեհաճեն ստորագրութեան ցուցակը և ժողոված գրամը հասցնել կենտրոնական գրավաճառանոցին մինչև առաջիկայ հոկտեմբերի 1-ը: Այնտեղ թող դիմեն և նրանք, որոնք ցանկանում են ստորագրվել ալբոմին, Նրանք, որոնք մինչև որոշեալ ժամանակը ժողոված գրամը չեն հասցնի, կը զրկեն բաժանորդներին ալբոմը բաժանորդագրութեան 3 բուբլի վճարով ստանալու իրաւունքից: Ալբոմը լոյս տեսնելուց յետոյ կը ծախվի 5 բուբլով:

1—3 ՊՕՂՈՍ ՏԷՐ-ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐԵԱՆՑ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ *յայտնում է ի գիտութիւն ընդհանուրի, որ նա ներկայ սեպտեմբերի 29-ին, կէսօրվայ 12 ժամին, կը կայացնէ աճուրդ նախ՝ կապալով տալու համար Աւչալսկայա փողոցի վրա, երկաթուղու գծի եռևում, փոքրիկ տնակների (խուտօրների) շարքում գտնվող 7 կոտ քաղաքային գետին, ամեն մէկը 134-ից մինչև 182 քառակուսի սաժէն մեծութիւնով, երկրորդ՝ վաճառելու համար նոյն տեղում գտնվող 3 կոտ քաղաքային գետին, մէկը 202, միւսը 171,6 և երրորդը 189,3 քառակուսի սաժէն մեծութեամբ:*

Աճուրդը տեղի կունենայ տեղում: Մասնակցողները պէտք է ներկայացնեն իրանց առաջարկած գնի կամ կապալավարձի 10% աճուրդի ժամանակ, իսկ առաջարկված գնի կամ կապալավարձի մնացեալը առաջին կիսամեակի (կէս տարվայ) համար պէտք է վճարեն մի ամսվայ ընթացքում, սկսած այն օրից, երբ գնողները կամ կապալառուները կը յայտնեն Քաղաքային Դումայի կողմից իրանց վրա աճուրդը հաստատվելու մասին:

3—3

Z—BOUQUET § Z—ԱՆՈՒՇԱՀՈՏՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ՇԱՏ ԹԱՆԳԱԳԻՆ, ԲԱՑՑ ՇԱՏ ԵՒ ՆՈՒՐԲ ՕԾԱՆԵԼԻՔ

Ռ. ԿԵՕԼԼԻԷՐԻ *և* ԸՆԿ. ԴՈՐԾԱՐԱՆԻՑ, ՄՕՍԿՎԱՅՈՒՄ

առաջարկվում է որպէս

ՌՈՒՍԱՑ ՊԱՐՖԻՄԷՕՐԱԿԱՆ ԱՐՀԵՍՏԻ ՆՄՈՒՇ

Ծախվում է գաւառներում բոլոր ամենալաւ մագազիններում 2—5 (№ 3)

Գ. *կարգի* **ՈՒՍՈՒՑԻՉ** *պաշտօն է որոնում մեր գպրոցներում: Դիմել „Մշակ“ լրագրի խմբագրութեան:*

3—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ *սրանով յայտնում է ի գիտութիւն, որ վերջինս Ա. Գ. Մելքումեանը, ձրի պատուաստում է ծաղիկ հասակաւորներին և թէ մանուկներին ամենայն օր առաւօտեան ժամը 7-ից մինչև 10-ը իր սեփական տանը, № 9 և 7, Նովո-կաթոլիչեսկի և Ալէքսանդրովսկի փողոցների անկիւնում, 9 քաղաքամասում:*

2—3

ՆՈՐ ՀԻՒՐԱՆՈՑ

„ԴԱՆԻԱ“

ԹԻՖԼԻՍՈՒՄ

Քաղաքի կենտրոնում, Գոլովինսկի պրոսպեկտի վրա: Գեղեցիկ և մաքուր կահաւորված սենեակներ. օրը 60 կոպեկից մինչև 5 բուբլի. ամսով մեծ զիջում է անվում:

Կերակուրները թարմ և համով:

НОВЫЕ НОМЕРА

„ДАНІЯ“

ВЪ ТИФЛИСѢ

въ центрѣ города, на Головинскомъ проспектѣ. Изящно и чисто меблированные номера отъ 60 коп. до 5 руб. въ сутки; помѣсячно большая уступка.

Пища свѣжая и вкусная.

14—36

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ *յանձն է առնում թարգմանել հայերէն մատչելի պայմաններով, ֆրանսերէնից, գերմաներէնից և անգլիերէնից: Ունենալով քանի մի ազատ ժամեր պատրաստ է դասաւանդել ֆրանսերէնը և գերմաներէնը ցանկացողներին: Նախադասելի են առաւել նոր սկսողները:*

Դիմել „Մշակի“ խմբագրութեան:

6—10

Լոյս տեսաւ

Պետերբուրգի հայ և վրացի ուսանողների հրատարակութեամբ

Կար. Եաղուբեանի

ՀԱՅԵՐԷՆ—ՌՈՒՍԵՐԷՆ

ԲԱՌԱՐԱՆԸ:

Գինը ճանապարհածախսով 2 *ր. է հրատարակութեան պահեստը գտնվում է Դվորցովայա փողոցի վրա, պ. Յովհ. Տէր-Սարգսեանցի խանութում:*

4—5

ԱՄԵՆԱԿԱՐԵՒՈՐ ՏԵՂԵԿԱԳԻՐ *վաճառականական դասակարգին պատկանող իւրաքանչիւր անձի համար ու* ՄԱՏՉԵԼԻ ՁԵՌՆԱՐԿ *առևտրական հաշուարարութիւնը առանց ուսուցչի օգնութեանը ուսումնասիրելու համար:*

Ս. ՄԱՆՈՒԷԼԵԱՆԻ

ՁԵՌՆԱՐԿ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՀԱՇԻԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Տոկոսների լիակատար աղիւսակներով, 1-ից մինչև 10.000 *բուբ. համար.* 1%-*ից մինչև* 12%. *Վաճառվում է եղբարց Յովիաննէսների բանկային գրասենեակում և հեղինակի մոտ.* Тифлисъ, Нагорная ул., № 9. *Օտարաքաղաքացիք դիմում են վերջին հասցէով՝* С. П. Мануэльянцу.

Գինն է 1 *բուբլի: Փոստի ծախս* 21 *կ. Գրավաճառներին զիջում կը լինի:* 14—150

Ստացվել է և վաճառվում է **„ԼՈՒՍԱԴԻՄԻՆ“**. *գինը* 1 *բուբլի, ճանապարհածախսով* 1 *բուբլի* 20 *կ.:*

Ազօ Մարուն	3 *կոպ.*
Փոքրիկ լրտես	2 „
Գարիբալդի	10 „

Հայերէն-ռուսերէն բառարան, ճանապարհածախսով 2 *բուբլի:*

Պահեստը պ. Տէր-Սարգսեանցի *խանութում է, Դվորցովայա փողոցի վրա: Թիֆլիսի գրավաճառները և գումարով առնողները ունենում են* 15% *զիջում: Օտարաքաղաքացիք—*20%: *Ճանապարհածախսը գումարով գնողների վրա է:* 3—5

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ: Աւարտողները ստանում են ատեստատներ:

Աւանդելի առարկայք սորա են՝ 1) *Առևտրական տնտեսութիւն,* 2) *Առևտրական թուաբանութիւն,* 3) *Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային),* 4) *Թուաբանութիւն համրիչի վրա,* 5) *Առևտրական թղթակցութիւն,* 6) *Առևտրական և մուրհակի կանոնագրութիւն և* 7) *գեղագրութիւն:*

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-*ից: Ընդունելութիւնները սեպտեմբերի* 1-*ից, ամենայն օր, երեկոյեան* 4-*ից մինչև* 8 *ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում,* Սօլոլակում, Աղէքսանդր Փրիդոնովի *տանը,* № 9 Սերգիէվսկայա *և* Նագորնայա *փողոցների անկիւնում, դեղատան դիմաց: Ծրագիրը ու կանոնները կարելի է ստանալ* ՁՐԻԱՊԵՍ *եղբ. Յովիաննէսների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում: Օտարաքաղաքացիք դիմում են կուրսերի հիմնողին.*—въ Тифлисъ, С. П. Мануэльянцу.

22—25 (Ե. Շ.)

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Շոգենաւերի կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻՑ *դէպի* ԲԱԹՈՒՄ, *չորեքշաբթի օրերը, երկուշաբաթը մի անգամ, չորեքշաբթի* 9/21 *յունվարից սկսած*

ԵՒ ՓՈԽԱԴԱՐՁ

Բաթումից Մարսէլ, *մտնելով* Տրապիզոն, Սամսոն, *և կ. Պոլիս:*

ԲԱԹՈՒՄԻՑ ՇՈԳԵՆԱՒԵՐԸ ԴՈՒՐՍ ԵՆ ԳԱԼԻՍ

Չորեքշաբթի,	11/23 *սեպտեմբերի*	— ԱՆԱՏՕԼԻԱ	— ԳԱԲՐԻԳ
—	25 *սեպտ.* (7 *հոկտեմբերի*)	— ԱՐՄԵՆԻԱ	— ՏԻԲԱԼ
—	9/21 *հոկտեմբերի*	— ՍԻԲԿԱՍԻ	— ԲՕՇԵԼ
—	23 *հոկտեմբերի* (4 *նոյեմբերի*)	ԱՆԱՏՕԼԻԱ	— ԳԱԲՐԻԳ

ԵՒ այլն, երկու շաբաթ մի անգամ, ՁՈՐԵՔՇԱԲԹԻ օրերը, 4 *ժամին կէսօրից յետոյ: Տօմսակների գները ուղղակի երթևեկութեան Բաթումից դէպի Պարիզ իսկական գնից պակսեցրած են:*

Տեղեկութիւնների համար ճանապարհորդների և բեռների մասին թող բարեհաճեն դիմել ընկերութեան ագենտներին. ԲԱԹՈՒՄՈՒՄ *պ.* Գարանիօնին, Նաբերէժնայա, ԹԻՖԼԻՍՈՒՄ *պ.* Վիկտոր Դ'ԱՐՆՕԻՆ, Միջին-փողոցում, Նախկին զինեբալ Տէր-Ասատուրովի *տանը,* ԲԱԳԻՈՒՄ, Սամուէլ Դիլդարովին, Կոլիւբիակինսկայա *հրապարակ, և* ՆՈՎՈՐՈՍԻՍԿՈՒՄ *պ.* Լուի Բրնօին: 5—12 (Ե. շ.)

ՀԱՅԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆԸ

ԾԽԱԽՈՏԻ ԳՈՐԾԱՐԱՆ

Ն. Յ. ԲՕՋԱՐՋԵԱՆՑԻ

ԹԻՖԼԻՍՈՒՄ

Յարգելի հասարակութեան ուշադրութեանն եմ առաջարկում իմ Ֆաբրիկայում ամենալաւ ֆրանսիական թղթից պատրաստվող

ԳԻԼԶԱՆԵՐԸ *առանց սօսինձի:*

Այդ գիլզանները պատրաստվում են իմ Ֆաբրիկայում նորերս ստացված ամենանոր սիստեմի ԱՄԵՐԻԿԱԿԱՆ **ԳՈՐԾԻՔՆԵՐՈՎ:**

Պապիրոսներ գործածողները միշտ կարող են ունենալ այդ տեսակ գիլզաներից ամեն տեսակ ծխախոտի և ամեն գների պապիրոսներ, որոնք արդէն վաճառվում են ահագին քանակութեամբ:

Նոր է ստացված ամենալաւ յատկութեան և թարմ

ԹԻՒՐՔԱՑ ԵՒ ՏԵՂԱԿԱՆ *ծխախոտ:*

Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս և ճիշտ կերպով: 3—10

Дозволено цензурою, Тифлисъ, 23 Сентября 1891 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.